Չորս հարիւր միլիոն ռուբլու չէկեր բաց թողնելու մասին. — *Թոյլատրել Հայաստանի Հանրապետութեան Կառավարութեան բաց թողնել, պետական բանկի երևանեան բաժանմունքի աջակցութեամբ կամ այլ ճանապարհով, չորս հարիւր միլիոն ռուբլու չէկեր կամ այլ դրամանիշներ աստիճանաբար ըստ կարիքի:*

(Հաստատուած է 1919թ. նոյեմբ. 20-ին)

Բամբակի մենավաճառութեան 1919թ. սեպտեմբեր 11-ի օրէնքի լրացման մասին. — *Ի լրացումն բամբակի մենավաճառութեան 1919թ. սեպտեմբերի 11-ի օրէնքի՝ սահմանել.*

1) *Բոլոր բամբակատէրերը պարտաւոր են մինչև 1919թ. դեկտեմբերի 31-ը պետական մենավաճառութեան պահեստներից որևէ մէկին յանձնել իրենց մօտ եղած ամբողջ բամբակը, հակառակ դէպքում չյանձնուած բամբակը, որպէս ապօրինի թաղցրուած, յարքունիս կը գրաւուի:*

2) *Ֆինանսների նախարարին իրաւունք է տրւում թաղցրուած բամբակը յայտնագործողներին վարձատրել այդ բամբակի արժէքի երկու երրորդականի չափով՝ հաշուելով բամբակի փուքը մամլածի՝—49ր. 50կ.. մաքրած, ոչ մամլածի—43ր. 50կ. և հունդաւորի՝—25ր.:*

(Հաստատուած է 1919թ. նոյեմբ. 25-ին)

«Այլազգիների Վարչութիւն» հիմնելու և այդ վարչութեան կարիքների համար 17·600 ր. վարկ բանալու մասին. — 1) *Հիմնել ներքին գործերի նախարարութեան կից առանձին «Այլազգիների Վարչութիւն» Հայաստանում ապրող ոչ հայ ցեղերի ուսումնասիրութեան համար, ենթարկելով այդ վարչութիւնը անմիջականօրէն ներքին գործերի նախարարին:*

2) *Բանալ ներքին գործոց նախարարութեան տասն և եօթ հազար վեց հարիւր ռուբլու վարկ «Այլազգիների Վարչութեան» սոյն թուի դեկտեմբերի մէկից մինչև 31-ը պահանջուող ծախսերը հոգալու համար, համաձայն սոյն օրէնքին կցած նախահաշուի:*

3) 1920թ. *յունուար 1-ից այդ գումարը որպէս ամսական ծախք մտցնել պետական նախահաշուի մէջ ընդհանուր հիմունքներով:*

(Հաստատուած է 1919թ. դեկտ. 5-ին)

Հայաստանի և Վրաստանի Հանրապետութիւնների՝ ապրանքների ազատ փոխադրութեան մասին՝ կնքուած դաշնագրի հաստատման մասին. —

(Հաստատուած է 1919թ. նոյեմբ. 11-ին)

Թիֆլիզ, 1919թ. նոյեմբերի 3

Վրաստանի Կառավարութիւնը՝ ներկայացուած ի դէմս Ներքին գործերի և Զօրական Նախարար Նոյ Վիսսարիոնովիչ Ռամիշվիլու և Վրաստանի Հանրապետութեան Հիմնադիր Ժողովի Փոխ-Նախագահ Սիմոն Գուրգենովիչ Մդիվանու *մի կողմից և Հայաստանի Հանրապետութեան Կառավարութիւնը՝ ի դէմս Ստեփան Գրիգորեան* Մամիկոնեանի *և Հայաստանի Հանրապետութեան Պարլամենտի անդամ Սմբատ Յարութիւնեան* Խաչատրեանի *միւս կողմից, — ծանօթանալով լիազօրութիւնների հետ և, գտնելով դրանք պահանջուած ձևի և պատշաճ կարգի, կնքեցին սոյն դաշնագիրն առ այն, որ.*